



Կ Ա Ր Գ

«Վաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Փաստաբանների պալատ**) 2015 թվականի ապրիլի 25-ին կայանալիք հերթական ընդհանուր ժողովում «Փաստաբանի օր» սահմանելու համար փաստաբանների կողմից ներկայացված առաջարկներն ընդունելու ընթացակարգը:

2. Փաստաբանները «Փաստաբանի օր» սահմանելու վերաբերյալ իրենց առաջարկները համապատասխան հիմնավորումներով ներկայացնում են Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի նախագահին՝ անհատական կամ խմբային կարգով՝ **2015 թվականի մարտի 19-ից** մինչև **2015 թվականի ապրիլի 2-ը (ներառյալ)**՝ աշխատանքային ժամերին (ժամը 10:00-18:00):

3. Փաստաբանների ներկայացրած հիմնավորումները գրաքննության ենթակա չեն: Յուրաքանչյուր փաստաբան կարող է անհատական կամ խմբային կարգով ներկայացնել «Փաստաբանի օր» սահմանելու մասին միայն մեկ առաջարկ:

4. Առաջարկները ներկայացվում են առձեռն կամ փոստով: Հայաստանի Հանրապետությունից բացակայող փաստաբանը կարող է իր ստորագրված առաջարկն ուղարկել էլեկտրոնային փոստով՝ info@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին:

5. Խմբային առաջարկներ ներկայացնելու դեպքում համապատասխան առաջարկում պետք է նշված լինեն առաջարկը ներկայացնող բոլոր փաստաբանների անունները, ազգանունները և փաստաբանական գործունեության արտոնագրերի համարները: Խմբային առաջարկի տեքստը պետք է ստորագրված լինի այն ներկայացնող (առաջարկին միացող) բոլոր փաստաբանների կողմից:

6. Փաստաբանների պալատի կայքէջում հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է ընդունված առաջարկները և դրանց հիմնավորումները:

7. Առաջարկներ ընդունելու վերջնաժամկետից հետո ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի նախագահը Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակում է ընդհանուր ժողովի քվեաթերթիկում ներառվող առաջարկները (ամսաթվերը):